

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի 2019-2021 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն ընտրելու համար:

Մրցույթային հանձնաժողովի լրացուցիչ որոշմամբ «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն կարող է ընտրվել նաև մեկ կամ երկու տարի ժամկետով:

Արտաքին աուդիտորը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.

- լինի հիմնադրամից անկախ,
- ունենա միջազգային ճանաչում (ներգրավված լինի առաջին տասնյակ լավագույն աուդիտորական կազմակերպությունների ցանկում, տվյալ ցանկը հրապարակված է <http://www.big4accountingfirms.org/the-top-accounting-firms-in-the-world/>, <https://www.accountancyage.com/static/top50-this-year>, <https://www.icas.com/ca-today-news/the-top-30-accountancy-firms-revealed> կայքերում),
- աուդիտի թիմում ներգրավված աշխատակիցները պետք է ունենան աուդիտի բնագավառում աշխատանքային փորձ,
- երկրորդ երեք տարվա աուդիտի համար Արտաքին աուդիտորը պետք է ներկայացնի աուդիտի համար պատասխանատու նոր ղեկավար, եթե մասնակցում է մրցույթին:
- պետք է բավարարի մրցույթային հանձնաժողովի կողմից սահմանված չափանիշներին:

Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող աուդիտի իրականացման արժեքը (*ծառայությունների գինը, ներառյալ հարկերը և ծառայությունների գնի հաշվարկման մեթոդը, որը պետք է ներկայացնել 2019-2021 թ. համար՝ նշելով յուրաքանչյուր տարվա համար աուդիտի իրականացման արժեքը, որը պետք է ներառի հարկերը*):

Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր տեխնիկական առաջարկները, տեղեկությունները և փաստաթղթերը (բացի գնային առաջարկից բոլոր էական պայմանները և տեղեկությունները, այդ թվում՝ աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման ժամկետները, աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, ինչպես նաև հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր այլ փաստաթղթերը և տեղեկությունները):

Արտաքին աուդիտորի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- Ընկերության հեղինակությունը,
- Ընկերության աուդիտի փորձը հիմնադրամներում,

- Աուդիտի թիմի ղեկավարի և ներգրավված աշխատակիցների աուդիտի բնագավառում աշխատանքային փորձը և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորումը,
- Աուդիտի թիմի ղեկավարի և անդամներից յուրաքանչյուրի տեղում և հեռակա ներգրավվածությունը աուդիտորական աշխատանքներում (մարդ/ժամ):

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հասցեով՝ ԶԶ, ք. Երևան 0010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բ/կ 7-րդ հարկ, «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Զիմնադրամ:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2019թ. մայիսի 22-ը ժամը 17:00-ն:

Մրցութային հայտերով ներկայացված «մրցույթի տեխնիկական առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենա 2019թ. մայիսի 23-ին ժամը 11:00-ին:

Մրցութային հայտերով ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատումը և «մրցույթի գնային առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենա 2019թ. մայիսի 24-ին ժամը 11:00-ին:

Մրցութային հայտերով ներկայացված առաջարկների գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփման նիստը տեղի կունենա 2019թ. մայիսի 30-ին ժամը 11:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Զիմնադրամի էլ. կայքում՝ www.fsm.am:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Զիմնադրամ:

ԶԶ, ք. Երևան 0010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բ/կ 7-րդ հարկ,

Ջեռախոս՝ (374 60) 701-111(ներքին 41 կամ 33)

Ֆաքս (374 10) 582-421

Էլ-փոստ info@fsm.am

Ինտերնետ կայք www.fsm.am

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ

ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀՐԱՎԵՐ

«Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի 2019-2021 թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով:

Մրցույթային հանձնաժողովի լրացուցիչ որոշմամբ «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն կարող է ընտրվել նաև մեկ կամ երկու տարի ժամկետով:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

1. մրցույթի մասնակցի տվյալները՝ այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը,
2. լիցենզիայի վավերապայմանները,
3. աուդիտի աշխատանքներին մասնակցող ընկերության փորձը (մասնավորապես Հիմնադրամներում),
4. առաջարկում ներկայացված աշխատակիցների որակավորման մակարդակը և փորձը (այդ թվում Հիմնադրամներում),
5. աուդիտի ընդգրկման շրջանակները,
6. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները (ներառյալ նախնական աուդիտի անցկացման ժամկետները),
7. աուդիտի իրականացման արժեքը,
8. աուդիտին մասնակցող աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ծախսվող օրերի և ժամերի քանակը (ինչպես տեղում, այնպես էլ հեռակա),
9. մրցույթային առաջարկությունը պետք է պարունակի երեք տարվա համագործակցության ծրագիր:
10. երկրորդ երեք տարվա աուդիտի համար Արտաքին աուդիտորը պետք է ներկայացնի աուդիտի համար պատասխանատու Նոր ղեկավար, եթե մասնակցում է մրցույթին:
11. լրացուցիչ տեղեկություններ (այդ թվում տեխնիկական և խորհրդատվական աջակցության հնարավորությունները և շրջանակները):

Մրցույթի պայմանները.

1. Առողիտորական եզրակացությունը պետք է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամին ներկայացվի ոչ ուշ, քան 2020թ. մարտի 21-ը, իսկ «Նամակ ղեկավարությանը» փաստաթուղթը՝ ոչ ուշ, քան 2020թ. մայիսի 1-ը:

2. Օտարերկրյա մասնակիցները մրցութային առաջարկությունները կարող են ներկայացնել անգլերեն լեզվով:

3. Առողիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ երկու լեզուներով կազմված փաստաթղթերն էլ պետք է ունենան միևնույն իրավաբանական ուժը:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին պետք է «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամին ներկայացվեն մինչև 2019թ. մայիսի 22-ը ժամը 17:00-ն՝ կնքված ծրարներով:

Մրցույթը կկայանա «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամում, ՀՀ, ք. Երևան 0010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բ/կ 7-րդ հարկ հասցեում:

Հրապարակային մրցույթում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն հրապարակային մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:

Մրցույթի հայտերի պատրաստման կարգը

1. Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամ ներկայացնում է մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2. Մրցույթի հայտերով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և սոսնձված ծրարներում: Ծրարները և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող իրավասու անձը:

Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ, ք. Երևան 0010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բ/կ 7-րդ հարկ, «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամ» բառերը,

2. «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի 2019-2021թթ ֆինանսական հաշվետվությունների առողիտի նպատակով առողիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,

3. «մրցույթի գնային առաջարկ» բառերը,

4. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,

5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող աուդիտի իրականացման արժեքը (ծառայությունների գինը և ծառայությունների գնի հաշվարկման մեթոդը, որը պետք է ներկայացնել 2019-2021թթ. համար՝ նշելով յուրաքանչյուր տարվա համար արժեքը, ներառյալ հարկերը):

Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ, ք. Երևան 0010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բ/կ 7-րդ հարկ, «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամ» բառերը,
2. «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» Հիմնադրամի 2019-2021թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով աուդիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,
3. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,
4. «մրցույթի տեխնիկական առաջարկ» բառերը,
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր տեխնիկական առաջարկները, տեղեկությունները և փաստաթղթերը (բացի գնային առաջարկից բոլոր էական պայմանները և տեղեկությունները, այդ թվում՝ աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման ժամկետները, աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, ինչպես նաև Հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր այլ փաստաթղթերը և տեղեկությունները):

Մրցույթի մասնակիցների կողմից հայտերի բացմանը և ամփոփմանը ներկա գտնվելը

1. Հրապարակային մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են մրցութային հանձնաժողովի թույլտվությամբ ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, նրանք կարող են ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին:

2. Մրցութային հայտերով ներկայացված «մրցույթի տեխնիկական առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենա 2019թ. մայիսի 23-ին ժամը 11:00-ին:

Մրցութային հայտերով ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատումը և «մրցույթի գնային առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենան 2019թ. մայիսի 24-ին ժամը 11:00-ին:

3. Մրցութային հայտերով ներկայացված ֆինանսական առաջարկների գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփման նիստը տեղի կունենան 2019թ. մայիսի 30-ին ժամը 11:00-ին: Մրցույթի մասնակիցները գրավոր կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին մինչև 2019թ. հունիսի 7-ը:

4. Մինչև մրցույթի հաղթողին ճանաչելը մրցութային հանձնաժողովը մասնակիցներից կարող է պահանջել ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Մրցույթի հայտերի ներկայացման պայմանները

1. Մրցույթի հայտն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:

2. Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնած մասնակիցները մինչև հայտերի ներկայացման վերջնական ժամկետի ավարտը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

Հրավերում փոփոխություններ և լրացումներ կատարելը, մրցույթից հրաժարվելը

1. Մրցույթի պայմաններում, ինչպես նաև մրցույթի հայտերը բացելու օրերի և ժամերի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու դեպքում, այդ մասին ծանուցվում են հրավեր ստացած բոլոր մասնակիցները:

2. Հրավերում փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հայտերի բացման օրը: Հրապարակային ծանուցմամբ հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցները իրավունք ունեն 30 օրյա ժամկետում և սույն հրավերով սահմանված կարգով մրցութային հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: Հիմնադրամը հրավերի պայմանների փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:

3. Հրավերում թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հայտարարության մեջ նշված էական պայմանները:

Մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը

1. Մասնակիցն իրավունք ունի Հիմնադրամից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում:

Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

2. Հիմնադրամը պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ էլ. եղանակով:

Մրցույթի հաղթողի ընտրության կարգը

1. Հաղթողին որոշում է խորհուրդը՝ մասնակիցներից լավագույն պայմաններ ներկայացրած անձանցից:

2. Մրցույթի հաղթող կճանաչվի այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացրած կլինի հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ:

3. Հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպության հետ պայմանագիրը կկնքվի մինչև 2019թ. հունիսի 14-ը:

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ